



**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**  
**բաժնետերերի 2022 թվականի ապրիլի 28-ի տարեկան ընդհանուր ժողովի**  
**որոշումները՝ 2021 թվականի տարեկան շահույթը բաշխելու մասին**

**ՈՐՈՇՈՒՄ N 21-4.1**

Հիմք ընդունելով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ 12/04/2022թ.-ի Խորհրդի նիստի թիվ 135-3 որոշումը և հաշվի առնելով Բանկի 2021 թվականի ֆինանսական արդյունքները՝ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը որոշեց Բանկի 2021թ. գործունեության արդյունքում ձևավորված զուտ շահույթից Բանկի բաժնետերերին վճարել ընդհանուր 3,300,000,000 (երեք միլիարդ երեք հարյուր միլիոն) ՀՀ դրամ՝ որպես տարեկան շահութաբաժիններ, այն է՝ յուրաքանչյուր 1 բաժնետոմսի դիմաց՝ 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ:

Տարեկան շահութաբաժինների վճարումները կատարել առավելագույնը մինչև 01/06/2022թ.-ը ներառյալ, դրամական եղանակով, միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ:

Շահութաբաժինների վճարումն իրականացնել «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա՝ 2022 թվականի ապրիլի 11-ի, ժամը 17:00-ի դրությամբ Բանկի մասնակիցների ռեեստրում ընդգրկված բաժնետերերին՝ կանոնադրական կապիտալում ունեցած մասնակցությանը համամասնորեն:

**ՈՐՈՇՈՒՄ N 21-4.2**

Բանկի կանոնադրական կապիտալի ավելացմամբ պայմանավորված բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովը որոշեց էմիսիոն եկամտից 750,000,000 (յոթ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ ուղղել Բանկի պահուստային հիմնադրամին (Գլխավոր պահուստին)՝ այն դարձնելով 8,250,000,000 (ութե միլիարդ երկու հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ: